ԱՆԳԼԻԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1918 թ. դեկտեմբեր - 1919 թ. օգոստոս):

Գ.Գ.ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

Ինչպես ամեն մի կայսերական կառուցվածքում, միլիտարիզմը մինչպատերազմական Մեծ Բրիտանիայի էական բաղադրամասն էր, քանի որ բանակի հարկադրական ուժը հակակշռում էր տնտեսական կապերի տկարությանը կամ անշահավետությանը: Ռազմական ուժերի հենց տիրական, և ոչ թե պաշտպանական դերն էլ անվանում են միլիտարիզմ: Դասական կայսրության տեր Անգլիան սեփական տանը կիրառում էր ներկայացուցչական պետություն, բայց գաղութների համար հարկավոր էին ծովակալությունը, ռազմական և Հնդկաստանի գործերի նախարարությունները: Հասկանալի է, որ պատերազմի տարիներին գեներալական կազմն ամրացրել էր իր դիրքը: Թեև Մուդրոսի ու Կոմպյենի զինադադարներից հետո, քանի դեռ որոշվում էր ռազմավարների ու աշխարհի ճակատագիրը, զինվորականները հաջողությամբ մրցում էին Ֆորին օֆիսի հետ՝ պետական կուրսը սահմանելու ասպարեզում, այնուամենայնիվ, Դ.Լլոյդ Ջորջը ընդունեց հատկապես նրանց տեսակետը:

Նշենք, որ երեք գերատեսչությունն էլ պահպանողական էին, իսկ վարչապետն ազատամիտ էր: Միջագետքյան ճակատի բրիտանական ուժերը՝ իրենց բազմաթիվ հնդկական գնդերով, ձգտում էին Բաղդադի ու Բաքվի նավթին: Այս ուժերը ներկայացնում էին գեներալ-մայոր Լ.Ջ.Դանստերվիլը, այնուհետև 82-րդ բրիգադի 39-րդ դիվիզիայի գեներալ-մայորի պաշտոնակատար Վ.Մ.Թոմսոնը և գեներալ Դ.Ի.Շատլվորթը: Իսկ սալոնիկյան ճակատում գործում էին անգլոսաքսոնական զորամասեր ու նավատորմը, որոնց առավել հետաքրքրում էին հողի գործոնը և ռազմածովային բազանները: Դրանք գեներալ Ջ.Ֆ.Միլնի 80-րդ ու 81-րդ բրիգադների միավորումներ էին, հատկապես առաջինի՝ գեներալ-մայոր Ջ.Տ.Ֆորբեստյե-Ուոկերի 27-րդ դիվիզիան, ինչպես և փոխ-ծովակալ Ս.Գաֆ-Բելթորպի նավախումբը Միջերկրական ծովում ու դերծովակալ Մ.Կայմ-Սեյմուրի սևծովյան նավախումբը:[1]

Մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում, մինչև 1919թ. օգոստոս, ռազ-

© Զեկուցվել է 1998 թ. մայիսի 20-ին, Երևանում, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության 80-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանում:

Ուսումնասիրման համար շատ պիտանի եղան և Ֆորին օֆիսի վավերագրերը, Lloyd George D. *Memoires de Guerre. 2 vols. Paris, A.Fayard & C., 1934, 1935;* Nassibian A. *Britain and the Armenian Question 1915–1923. Lnd., Croom Helm, 1984;* Hovannisian R. *The Republic of Armenia. vol 1-4 Berkeley & L.A., 1971-1996, հատկապես առաջին երկու հատորը;* Խատիսյան Ա., *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968;* Վրացյան Ս. *Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993: ՀՀ Պատմության պետական արխիվն ու Հայաստանի հասարակական և քաղաքական կազմակերպությունների Կենտրոնական պետական արխիվը նշվելու են որպես ՀՀ ՊՊԿԱ և ՀՀ ՀԲԿՓԿՊ: Այն դեպքերում, երբ վավերագրերը գտնվում են մի քանի զորքերի մեջ, հաճախ ունենում են որոշակի տարբերություններ, ուստի դրանց տվյալները նշվում են ամբողջությամբ: Documents on British Foreign Policy 1919–1939. Ed.by E.L.Woodward, R. Butler. 1st Series. Lnd., HMSO, 1947–1963 նշվելու են որպես British Documents, իսկ Great Britain Foreign Office Archives, Public Record Office որպես FO.*

մական նախարարությունը ոչ միայն հակազդում էր Արևելյան հարցերում ավելի ազատամիտ Ֆորին օֆիսին, այլև նրա դաշտային բարձրագույն հրամատարությունում բացեիբաց մրցակցում էին «հնդկական» ու «սալոնիկյան» կուսակցությունները: Դա անդրադառնում էր նրանց անդրկովկասյան գործունեության վրա: Վ.Թոմսոնի զորամասերը ձգտում էին Բաքվի նավթին, իսկ Ջ.Միլնի գումարտակները հսկողության տակ էին առնում երկրամասի կենսական նշանակություն ունեցող կենտրոնները: Ընդ որում, խոսքը հենց տեղերում վարչակարգի ստեղծման մասին էր՝ տեղաբնակ իշխանության ցանկություններից անկախ, անկայուն, վիճելի կամ կենսական կարևորություն ունեցող շրջաններում (օրինակ՝ Բաթումի մարզում): Այնտեղ կազմակերպվում էին ռազմական գեներալ-նահանգապետություններ, որոնք ունեին հստակ սահմաններ ու ենթակայության համակարգ, բրիտանացի պետերի իրավասությունների ծավալը կախված էր զինված ուժերի առկայությունից, բնակիչներից պահանջվում էր բացարձակ հնազանդություն և անգլիացիների հետ համագործակցություն: Տեղական կառավարությունները սկզբից ընդհանրապես չէին ճանաչվում, իսկ երկրամասի հանրապետությունների փաստացի ճանաչումը տեղի էր ունեցել միայն 1920թ. հունվարին, Անդրկովկասից բրիտանական զորքի հեռացումով (բացառությամբ Բաթումի): Ի դեպ, «հնդկական քաղաքականություն» և «հնդկական ձգտումներ» հասկացությունները զուգահեռաբար կիրառել էր կապիտան Կալմանյանցը, 1918թ. նոյեմբերի 25-ին՝ արտգործնախարար Ս.Տիգրանյանին հասցեագրած զեկուցման մեջ՝ Վաշինգտոնին կոչ անելով սատարել հայերին, որովհետև ԱՄՆ-ին «ցանկալի չէ անգլիացիների ծավալումը Արևելքում»:[2]

Նրանց թափանցումը տարածաշրջան որոշվել էր պատերազմական կաբինետի 1917թ. դեկտեմբերի 23-ի վճռով, ըստ որի, ռուսական հարավը բաժանվում էր անգլիական և ֆրանսիական ազդեցության ոլորտների: Անդրկովկասը ամբողջությամբ պետք է ենթարկվեր Մեծ Բրիտանիային: Նույն օրը ռազմական նախարարության նիստում առաջարկվեց կառավարման տակ վերցնել Անդրկովկասը՝ Դոնի հետ միասին, իսկ Ֆորին օֆիսի վճռով ավելացվեց և Թուրքեստանը:

Կայսերական գլխավոր շտաբի պետ Հ.Ուիլսոնի մշակումով ներառվել էին կենսական կենտրոններ, որոնք ապահովում էին երկաթուղի և Բաթում-Բաքու խողովակաշարը: 1918թ. նոյեմբերի 21-ին կառավարական որոշմամբ թույլատրվեց բանակի ներգրավումը գործողությունների մեջ և հանձնարարվեց ռազմական գործողությունների պետ Պ.Պ.Ռեդկլիֆին՝ հրամայել Ջ.Միլնին, որ նա պատրաստի բրիտանական դիվիզիա՝ նավերով Բաթում մեկնելու համար: Իր հերթին, նույն նախարարության դեկտեմբերի 11-ի հրամանը ծանուցում էր, որ կայսրության նպատակն է Կովկասում թուրքերի կողմից զինաղադարի պայմանների կատարումը: Սև ու Կասպից ծովերի միջև երկաթուղու և խողովակաշարի հսկողության, Բաքվի, Բաթումի և, հավանաբար, Թիֆլիսի օկուպացիայի պլաններում Երևանը կամ Հայաստանը չէին նշվում: Սալոնիկյան բանակի մի մասը՝ 80, 81, 82-րդ բրիգադի կազմով նոյեմբերի կեսերին տեղաշարժվեց Կ.Պոլիս՝ հիմնելով գեներալ Ջ.Միլնի

---

[2] Տե՛ս օրինակ. ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.107-108 դարձ, 173; գ.32, թ.9-12; ֆ.200, ց.1, գ.16 մ.I, թ.17դարձ-19դարձ; գ.158, թ.7-10; ց.2, գ.3, թ.1; գ.24, թ.1; ՀՀ ՀՔԿԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.962, թ.49; գ.963, թ.70-76; գ.964 մ.II, թ.133-135; գ.978, թ.1-7; Nassibian A. Op.cit., p.154.

սևծովյան բանակի շտաբ-կայանը: Իսկ Է.Ալենբիի էքսպեդիցիոն կորպուսի մի մասը տեղափոխվեց Բաքու` ստեղծելով Վ.Մ.Թոմսոնի շտաբ-կայանը: Միջագետքի բանակը առաջներում Հնդկաստանի հսկողությունն ապահովող ուժերից էր, որը սերտ կապեր ուներ Է.Մոնտեգյուի գերատեսչության հետ:

1918թ. դեկտեմբերի 15-ից 1919 թ. հունվարի 5-ը Բաթումում ափ էր իջել 80-րդ բրիգադի 27-րդ դիվիզիան: Հիմնական ուժերը նավերից իջել են 22-23-ին` 24-ին հիմնելով բրիգադային գեներալի պաշտոնակատար Վ.Ջ.Քուկ-Կոլլիսի շտաբ-կայանը: Այնուհետև, հաղթահարելով Ն.Ժորդանիայի դիմադրությունը, դեկտեմբերի 25-ին Թիֆլիս ուղարկվեցին Ջ.Ֆորեստյե-Ուոքերի ջոկատները: 1918թ. նոյեմբերի 17-ին Վ.Թոմսոնի զորամասերը մտան Բաքու: Երկրամասը այսպես բաժանվեց Արևմտյան ու Արևելյան Անդրկովկասի: Հունվարի 22-ին գեներալ-մայոր Գ.Ղորղանյանը Ս.Տիգրանյանին գաղտնի զեկուցումով հայտնում էր, որ «անգլիացիները ժամանել են Կովկաս` Դաշնակիցների ընդհանուր ծրագրի համաձայն... Ըստ որում, Անդրկովկասն ընկել էր անգլիական զորքերի համար նախորոշված հատվածը: Ռուսաստանի հարավը, այն է` Հյուսիսային Կովկասն ու վերը, վիճակվել են ֆրանսիացիներին»: Դրանից քիչ առաջ, իր ղեկավարին համանման տեղեկություններ էր տալիս Եկատերինոդարից Կամավորական բանակին կից ՀՀ-ի դիվանագիտական ներկայացուցիչ Հ.Սաղաթելյանը:[3]

Ալբիոնի առաջին քայլերից նշենք Վ.Թոմսոնի դեկտեմբերի 1-ի հեռագիրը գեներալ Անդրանիկին` դադարեցնելու առաջխաղացումը Զանգեզուրի հովտում, և Ջ.Միլնի հրամանը` Բաթումի նահանգապետության հանդեպ Ն.Ժորդանիայի կառավարության դժգոհության առթիվ: Հիշեցնենք, որ վարչական կառուցվածքի հրամանների ուրվագիծը արձակվում էր Լոնդոնից, Պատերազմական կաբինետից: Սկզբից նա ունեցել է հետևյալ տեսքը`

Պատերազմական կաբինետ
21.11.1918
ռազմական նախարարություն
Պ.Պ.Ռեդկլիֆ
գեներալ-մայոր
ռազմական գործողությունների պետ
11.12.1918
Լ.Ֆ.Ֆրանշե դ'Էսպրե
Դաշնակցային զորքերի
հրամանատար Կ.Պոլսում

Ս.Ա.Գաֆ-Քէլթորպ	Ջ.Միլն
փոխ-ծովակալ	գեներալ
բրիտ.ՌԾՈՒ Միջերկրային ծովում	Անատոլիայից մինչև
Չ.Ջ.Բրիգզ	Կովկաս
գեն.-լեյտենանտ	1918 նոյեմբ. կես – 13.11.1920

---

[3] Great Britain, Cabinet Office Archives, Public Record Office, Lnd. Cab. 23/8, War Cabinet Minutes 495 (5), 502 (Appendix), 505 (3), 27/24, E.C. 2392, 27/38, E.C. 2709; British Documents, vol.3, p.365–373; Fischer L. *The Soviets in World Affairs*. Lnd., 1930, vol.II, p.836; Ullman R.H. *Anglo-Soviet Relations, 1917–1921. Vol.II. Britain and the Russian Civil War, November 1918 – February 1920*. Princeton, 1968, p.45; Hovannisian R. *Op.cit.*, vol.I, p.61, 170. Տես նաև` ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.158, թ.91-92; ց.2, գ.65, թ.1-4; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.963, թ.88-95; Nassibian A. Op. cit., p.94-103, 107, 114, 117, 125-127, 145-146, 151:

Ա.Դենիկինի հետ կապը
Կոստանդնուպոլիս

Մ.Կալմ-Սեյմուր	Ջ.Ֆորեստյե-Ուոկեր	Վ.Թոմսոն
դեր-ծովակալ	գեներալ-մայոր	գեներալ-մայորի պաշտ.
բրիտանական ՌԾՈՒ	Թիֆլիս	Բաքու
Սև ծովում	25.12.1918 - 10.03.1919	17.11.1918 -10.03.1919
Վ.Քուկ-Կոլլիս	Կ.Է.Տեմպերլի	Ֆ.Ի.Լաուտոն	Ռ.Պ.Ջորդան
բրիգ.գեն.-պաշտ.	կապ., փոխ-գնդապ.	կապ., փոխ-գնդ.	փոխ-գնդ.
	պաշտ., գնդապետ	պաշտ.	հունվ. - 9.03.1919
Բաթում	Կարս	Շարուր - Նախիջևան	
5.12.18-9.07.20	12.01.-2.03.19	26.01-23.03.19	

Անդրադառնալով Հայաստանին՝ Ջ.Ֆորեստյե-Ուոքերը, գեներալ Վ.Բիչի ու գնդապետ Կ.Տեմպերլիի հետ միասին, հունվարի 4-ին մեկնեց Թիֆլիսից Կարս,[4] վերջինիս ռազմական նահանգապետ հաստատելու համար: Հունվարի 6-ին նա Ալեքսոլում տեղեկացրեց Ս.Տիգրանյանին, որ Կարսը առնում է իր բանակի հսկողության տակ: ԱԳՆ-ի ղեկավարին ներկայացրին համաձայնագիրը քաղաքի ու ամրոցի կառավարման մասին: Հունվարի 10-ին Մինիստրների խորհրդում Ս.Տիգրանյանը զեկուցեց, որ հայերին են փոխանցվում երկաթուղին, քաղաքի վարչության ու միլիցիայի ստեղծման գործը, բուն Կարսի բերդը և նրա պաշարները: Թեև բոլոր պաշտոնյաները պետք է ենթարկվեին անգլիական ռազմական նահանգապետին, իսկ անգլիական բանակի բեռները տեղափոխվեին անվճար:[5]

Այնուհետև, Արևմտյան Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարը հունվարի 7-ին իր գնացքում հրամայեց թուրքական 9-րդ բանակի գլուխ Շևքի-փաշային՝ նույն ամսվա 25-ին ավարտել 1914թ. սահմանի տարատեղումը և չխախտել պարենի արտահանման 403 տոննայի ծավալը՝ մեկ զինվորին բաշխելով 1 կգ հացահատիկ, մեկամսյա ժամկետով: Այլ գույքի դուրսհանումը արգելվում էր: Սակայն արդեն հունվարի 20-ին Կարսի ռազմական նահանգապետին կից ՀՀ-ի հատուկ հանձնարարությունների գծով սպա կապիտան Ս.Զարեկովը հաղորդում էր Սարիղամիշից, որ թուրքերը ոչ մի չափ ու քանակ չեն ճանաչում: Նա պահանջում էր կամ ընդհատել թալանը, կամ հետ կանչել իրեն՝ որպես ՀՀ-ի ներկայացուցչի:[6]

Անգլիացիների առաջին քայլերի համար բնորոշ էր հայ զինվորներին ամրոցից դուրս մղելու և Երևանից բերած տեղական ռադիոսարքերի բացառիկ օգտագործման ձգտումը: Հունվարի 25-29-ին դա հաջողվեց: ՀՀ-ի զորավարները շարունակ հաղորդագրություններ էին ստանում ժամանող

---

4 British Documents, vol.4, p.654-657; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.32, թ.15; ֆ.200, ց.1, գ.309, թ.204-207; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.962, թ.152-159; գ.964«Ա», թ.128-138; Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов. Под ред.В.А.Микаеляна. Е., 1992, с.65, 69.

5 ՀՀ ՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.22 մ.I, թ.7-8; գ.35, թ.54; ց.2, գ.39, թ.1-5, 8-13, 451-457; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.962, թ.132; գ.964, թ.46-56; գ.964 «Ա», թ.117-118: Տես նաև՝ Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 156-158:

6 ՀՀ ՊՊԿԱ, ֆ.200, ց.2, գ.39, թ.24-29: Տես նաև՝ թ.17-18 և FO 371/3657, 10607/512/58՝ Nassibian A. Op.cit., p.94, 159 մեջ: Խատիսյան Ա., նշվ.աշխ., էջ 157:

անգլիական զորամասերի ու բարձրագույն սպայական կազմի մասին: Միաժամանակ, ի զարգացումն կապիտան Ֆ.Ի.Լաուտոնի նախաձեռնության, ամսի 26-ին Ջ.Ֆորբեստյե-Ուոքերի հրամանով ստեղծվում է Նարուր-Նախիջևանի ռազմական նահանգապետություն: Այն Հայաստանի մաս էր ճանաչվելու միայն մայիսի կեսերից:

Այդ օրերին Հ.Քաջազնունին ու Ս.Տիգրանյանը անգլիացի գեներալ-մայորին գրում էին Կարսում հայկական վարչության անհնարինության, գաղթականների ծանրագույն դրության և հացի կարիքի մասին: Մինիստր-նախագահը նույնանման հեռագիր հղեց հունվարի 31-ին՝ տեղեկացնելով Հայաստանում մահացության և սովի մասին: Փետրվարի 3-ին Հ.Քաջազնունին կառավարությանը զեկուցեց նահանգապետ Ֆ.Լաուտոնի հետ վարած բանակցությունների մասին, որը Ս.Տիգրանյանը ընթերցել էր «Համաձայնության արձանագրությունը», ըստ որի, Հայկական զորքը չէր կարող մնալ տվյալ գոտում: Այս պարագայում ՀՀ-ն բավարար ուժ չէր ունեցել շրջանի զինված մահմեդականներին դիմակայելու, բայց փետրվարի 8-ին զորքերը հետ քաշելու պահանջը վկայում էր պետական գործառնության ոչ լիարժեքության մասին:[7]

Փետրվարի 7-ին Ջ.Ֆորբեստյե-Ուոքերը Վ.Ասսերի հետ միասին առաջին անգամ այցելում է Երևան, որտեղ զրուցում է Հ.Քաջազնունու հետ՝ Հ.Հախվերդյանի, Ս.Տիգրանյանի և այլ պաշտոնյաների ներկայությամբ: Կառավարության նախագահը պնդում էր, որ պահանջելով Նախիջևանից ՀՀ-ի զորամասերի դուրսհանումը, անգլիացիները պետք է սկզբից երաշխավորեն հայ բնակիչների կյանքի ապահովությունը և իրենց վրա վերցնեն գաղթականների համար պատասխանատվությունը: Նա ասաց, որ Հայաստանը անհապաղ օգնության կարիք է զգում: «Հայերը անիրկլյա վստահ էին, որ Դաշնակիցների հաղթության ու Կովկաս ժամանման հետ, իրենց դրությունը կբարելավվի: ...Ապա վերջի ժամանակները ժողովրդի մեջ առաջ է եկել տարակուսանք, մի տեսակ կասկածոտ վերաբերմունք ու հիասթափմունքի զգացում: Ժողովրդի վերջին հույսը կարծես թե չարդարացված է մնում»: Հանրապետության ղեկավարը կարծում էր, որ «Հայ պետության ինքնուրույնության ծագման հետ կապված քաղաքական պրոբլեմները ըստ երևույթին վճռվելու են Փարիզում»: Այդ պատճառով «Հայը, դպրոցականները և երկաթուղային կասլը» դարձան զրույցի գլխավոր հարցերը:

Իսկ հյուրը պնդում էր Նախիջևանից հայկական զորամասերի հեռացման վրա՝ առաջարկելով իր միջնորդությունը և Էլարարաղի հարցում: «Ես այդ անելու եմ մի պայմանով, և գուցե ոչ ոք չի իմանալու սրա մասին կոնֆերանսում, քանի որ սա ժամանակավոր է, բայց ես հանձն եմ առնում միջնորդ լինելը այն պայմանով, որ իմ որոշումը ընդունվի որպես պարտադիր»: Թեև նա չէր խոստանում ընդհարումը կարգավորել ի բավարարումն երկու կողմերի: Ի դեպ, անգլիերեն տարբերակում չկա Նախիջևանը թողնելու պահանջը, իսկ հեռանալու ժամկետները չեն համապա-

---

[7] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ.1033, ց.2, գ.962, թ.134, 137-138, 140, 163-167, 170; ա.963, թ.136; գ.964«Ա», թ.118-121, 139-145, 147; գ.1000, թ.2-6; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, ա.32, թ.5-5 դարձ; ֆ.200, ց.1, գ.35, թ.61, 72, 150-154, 160-164:

[8] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ.1033, ց.2, գ.962, թ.141-142; գ.964«Ա», թ.3, 121-122; ա.994, թ.2, 4; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.32, թ.34; ֆ.200, ց.1, գ.22 մ.1, թ.23-23դարձ; գ.35, թ.86:

տասխանում ռուսերեն օրինակին:[9] Այնուհետև, Ջ.Ֆորեստյե-Ուոքերը մեկնեց Ալեքսանդրապոլ ու Կարս, ամսի 11-ին հայտնելով, որ երկրորդ քաղաքում ՀՀ-ի քաղաքացիական իշխանության գաղափարը պետք է թողնել: ՌՆ-ի 1919թ. փետրվարի 15-ի հրամանով բրիտանական վարչակարգը ամրացնում էր արդեն իսկ ստեղծած հայկական կառուցվածքը՝

Ջ.Ֆորեստյե-Ուոքերը
27-րդ դիվիզիայի հրամանատար
Թիֆլիս
Վ.Թոմսոն
10.03 - 12.05.1919
Ջ.Ն.Կորի
12.05-6.09.1919

Կ.Է.Տեմպերլի
կապիտ.,փոխ-գնդապ.
պաշտ.,գնդ., ռազմ.նահանդ.
Կարս
12.01. -2.03.1919

Վ.Ասսեր
ժաման.բրիգ.գեներալ
բրիտ.ռազմ.ներկայացուցիչ
Երևան
7.02-2.03.1919

Վ.Ասսեր
2-26.03.1919

Կ.Է.Տեմպերլի
2.03. -27.04.1919

Ջ.Ա.Պրեստոն
փոխ-գնդապետ
ռազմ. ներկայացուցիչ
26.03-4.04.1919

Ք.Մ.Դեվի
բրիգադային գեներալ
27-րդ դիվիզիայի
Հարավային թևի
գլխավոր հրամանատար
4.04-14.06.1919

ռազմ. նահանգապ.
4.04-6.05.1919

Հ.Ռ.Պրոսսեր
կապիտան
ռազմ.ներկայացուցիչ
11.05-30.08.1919
զորքերի մեկնելը 8.06.1919

Ջ.Ջ.Պլաուդեն
փոխ-գնդապետ
բրիտ.ռազմ.ներկայացուցիչ
12.06-28.08.1919
զորքերի մեկնելը 28.08.1919

Ֆ.Ի.Լաուտոն
կապ.,փոխ-գնդ.պաշտ.
ռազմ.նահանգապ.
Ագուլիս
Շարուր-Նախիջևան
26.01-23.03.1919

Վ.Դ.Դիբբոն
մայոր
միսիայի պետ
Շուշի
Ղարաբաղ
1918 դեկտ. - 8.02.1919

Ա.Շ.Ջ.Դուգլաս
կապ., մայորի պաշտ.
միսիայի պետ
Ալավերդի
Լոռի
27.01-1919 օգոստ.

Ջ.Ջ.Սիմպսոն
փոխ-գնդապետ
23.03. -1.06.1919
զորքերի մեկնելը 7.06.1919

Գ.Ն.Մոնք-Մեյսոն
մայոր
24.02-10.06.1919

Ֆ.Լ.Շվինդ
լեյտ.,կապ.պաշտ.
15.05.1919

Ռ.Տիրեր
մայոր
բրիտ.ռազմ.ներկայացուցիչ
10.06-16.08.1919
զորքերի մեկնելը 18.08.1919

---

[9] ՀՀ ՀՔԿԳԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.962, թ.1-2, 5-15, 25-32; գ.964 «Ա», թ.4-17, 27-36; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.127-139; գ.32, թ.42-64, 132-139: Զրույցը վավերացված է ռուսերեն ու անգլերեն լեզուներով, ուստի Հ.Քաջազնունու խոսքի հայերեն տարբերակը շարադրել եմ ես: Ճշգրիտ լինելու համար օգտագործել եմ նաև Խորհրդարանին տված իր զեկույցը բրիտանացիների այցելության մասին: Նույն մոտեցումը պահպանվում է և համանման դեպքերում, երբ բացակայում են հայերեն լեզվով վավերագրերը:

Նույն հրամանով վերապահվում էր, որ թուրքական զորքի տարհանման հետ բրիտանական ուժերը հետ կկանչվեն Կարսից:[10]

ՀՀ-ի թուլությունն ու ծայր աստիճան ծանր դրությունը, իհարկե, չէին նպաստում զինվորականների բարեհաճ վերաբերմունքին, իսկ նրանց վճիռները բնավ ուրախություն չէին առաջացնում հանրապետության ղեկավարների մեջ: Փետրվարի 28-ին Ա.Խատիսյանը զեկուցեց Մինիստրների խորհրդին, որ Ֆ.Լաուտոնը խախտում է համաձայնությունը ադրբեջանցի բնակիչներին մղելով չենթարկվել Երևանին: 10 օր անց, մարտի 8-ին և 12-ին, Ս.Տիգրանյանը առաջարկ է անում Մինիստրների խորհրդին «Հայաստանի հանրապետության սահմանները որոշելու համար... մի հանձնաժողով կազմելու մասին»: Նման քայլով ՀՀ-ն ինքնուրույն պետք է սահմաններ այն հողերը, որ ի վիճակի էր պահել իր հսկողության տակ: Բնականոն պայմաններում յուրաքանչյուր պետություն ինքն է ձևակերպում խնդիրները, որոնք հավակնում է լուծել: Սակայն կառավարության մյուս անդամները պատրաստ չէին նման որոշման և միայն հանձնարարեցին «արտաքին գործերի մինիստրին՝ ձեռքի տակ ունեցած նյութերով հիմնավորված մի զեկուցում ներկայացնել Մինիստրների խորհրդին»: Հետագայում այս հարցը չէր քննարկվում, իսկ մարտի 14-ին ռազմական հետախուզության պետ, բրիգադային գեներալ Վ.Բիչը գրելու է Ն.Ժորդանիային ու Հ.Քաջազնունուն, որ «Անդրկովկասի ժամանակավոր սահմանները վճռելու է Վ.Թոմսոնի գլխավորած կոմիտեն, իսկ վերջին խոսքը պատկանելու է Փարիզյան կոնֆերանսին»: Ընդ որում, «գեներալ-մայոր Վ. Թոմսոնի որոշումը... պետք է լինի վերջնական... Երեք Կառավարություններից ամեն մեկի անդամները ունենում են ձայնի իրավունք միայն այն ժամանակ, երբ անմիջապես չոչափվում է նրանց կառավարության տարածքը: Կարծում եմ, որ Հայաստանի կառավարությունը համաձայն է ընդունել առաջարկվող միջնորդական դատարանը»:[11]

Որպես որոշակի հանրագումար կարելի է բերել 1919թ. մարտի 6-ի Ս.Տիգրանյանի նամակը Փարիզ, Հայկական պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյանին: Նախարարը գրում էր, որ բրիտանական հրամանատարությունը Կարսի թուրքերի «բողոքներին ու պահանջներին նեցուկ է հանդիսանում»: Դրա չնորհիվ, «մեզանից պլստաց և Շարուր-Նախիջևանը: ...Բրիտանական հովանավորության ներքո գտնվող Ղարաբաղը այժմ մտցնում են ադրբեջանական գեներալ-նահանգապետության կազմի մեջ: ...Գլխավոր պատճառը, անշուշտ, կայանում է անգլիական զինված ուժերի... թուլությունում»: Նրանց «ռազմական նահանգապետությունները լոկ նրբաքող թափանցիկ քողարկումներ են... որոնց տակ պարզ երևում են թուրքիայի իսկական իշխանությունը և ուժը»: Ջ.Ֆորեստյե-Ուոքերի պահանջով Երևանից հեռացրին Կամավորական բանակի ներկայացուցչին, թեև անգլիացիները չեն աջակցում Անդրկովկասում մեր զինված ուժերի կազմակերպմանը և ուժեղացմանը: Կարսի մարզային միլիցիայի մեջ «Հայերին «դեռևս» չեն ընդունում»: Մեղ մեղադրում են ռուսասիրության մեջ, «թեև այսօր մենք կարող ենք տածել Ռուսաստանի հանդեպ միայն պլատոնական սեր, ինչը մնաս է պատճառելու ինչպես այսօր, այնպես էլ

---

[10] FO 371/3661, 31192/1015/58. Hovannisian R. Op.cit., vol I, p 213; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.32, թ.12-50:

[11] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.1012, թ.1-2; Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. (Сборник документов.) Под ред.А.Н. Мнацаканяна, А.М.Акопяна, Г.М.Даллакяна. Е., 1957, с.260-262.

վաղը: Իսկ ինչ է լինելու վաղը չէ մյուս օրը. սա ոչ ոք չի իմանում»: Մենք, գրում էր նախարարը, Անգլիային Թուրքերից պաշտպանող չէինք համարում, քանի որ նրա «մարտանավերը չեն կարող մագլցել Հայկական լեռնաշխարհը»: Բայց այսօր նրա ռազմածովային ուժերը կանգնած են Դարդանելում ու Բաթումում, իսկ փոքրաքանակ բանակը գտնվում է Անդրկովկասում: Սակայն նրա խնամակալությունն ու պաշտպանությունը ոչ տեսնում ենք, ոչ էլ զգում: «Մենք չունենք ոչ մի երաշխիք ու վստահություն, որ անգլիական հրամանատարությունը ցանկություն և հնարավորություն ունի մեզ փրկելու տվյալ [թուրքական] վտանգից, որը, ինչպես կրկնում ու պնդում եմ, այսօր ոչ պակաս իրական և սպառնացող է, քան ամիսներ առաջ: ...Մեր գործողությունները և զարգացումը դժվարացած են ... մեզ ոչ ոք չի օգնում: ...Կարսում և այլ վայրերում գտնվող անգլիական զորամասերը ենթակա են զորացրման և մեկնում են»: Այդ բավական հավասարակշռված կարծիքի կողքին կային կուսակցական բնույթի ավելի վարդագույն գնահատականներ:

Արդ, ՀՀԴ-ի ֆրակցիայի կողմից Եվրոպական պատվիրակության՝ Ռուսական միսիայի անդամ Մ.Ի.Արզումանյանը հաղորդում էր մարտի 22-ին Ս.Տիգրանյանին «բրիտանական միսիայի և [Թիֆլիսում] նրանց հակահետախուզության հետ առնչությունների մասին» իր եզրակացությունը. «Անգլիան չի հեռանալու Անդրկովկասից, թեև այդ է կամենում Ռուսաստանը, մասամբ Ֆրանսիան և նույնիսկ Ամերիկան... Անգլիայի և Ամերիկայի միջև մեծ վեճեր են գնում: Անգլիան ոչ մի հարցում ոչ ոքի չի զիջելու, անդամ եթե գործը հասնի զինված ընդհարման... Ըստ իս, պետք է հրաժարվել Ամերիկա պատվիրակություն առաքելու մտքից, ես կասեի՝ դա անհրաժեշտ է անել, ինչպես հրաժարվեցինք Ռուսաստան ուղևորվելուց, մինչև պարզվի համաշխարհային իրադրությունը: Կխնդրեի Ձեզ... հասցնել իմ տեղեկությունները Մինիստրների Խորհրդին՝ ի գիտություն»:[12]

Մարտի 16-ին Ջ.Միլնը էական փոփոխություններ է կատարում: Նա Բաքվի 39-րդ բրիգադով լրացրեց 27-րդ Թիֆլիսյան դիվիզիան՝ այնտեղ տեղափոխելով Վ. Թոմսոնին, որպես հրամանատար: Դրանով տարածքներին գերապատվություն էր տրվում նավթի հանդեպ, թեև, միաժամանակ, ուժեղացվում էր հնդկական կուսակցությունը, ինչը լրջորեն անդրադարձավ Կարսում անգլիացիների վարքագծի վրա: Այն, որ առաջնությունը տրվում էր հատկապես նոր շրջաններին, հաստատվեց մայիսին, երբ գլխավոր հրամանատարը իր շտաբի պետ գեներալ-մայոր Ջ.Ն.Կորիին առաքեց փոխարինելու Վ.Թոմսոնին: Վերջինս մարտի 24 - 26-ի հրահանգներով պահանջում էր Կարսի մարզում ուժեղացնել մահմեդական Խորհրդին, որը բացահայտորեն համագործակցում էր Թուրքերի հետ և չէր ցանկանում ենթարկվել նոր իշխանություններին: Իրադրությունը մշտապես սրվում էր բերդից պարենի և զենքի դուրսբերումով: Թեև թուրքական զորքերի Կովկասից դուրսբերումը նախատեսվում էր 1918 թ. նոյեմբերի 24-ից մինչև 1919թ. հունվարի 25-ը, նրանց վերջին ջոկատները Կարսից հեռացան միայն 1919թ. մարտի 6-ին, իսկ մարզից՝ մարտի 15-ին: Նրանց դանդաղ դուրսբերումը նպաստում էր պահեստների հիմնավոր թալանին՝ Սարիղամիշի ճանապարհի երկայնքով մինչև Էրզրում: Մեծաքանակ անհրաժեշտ սարքա-

---

[12] ՀՀ ՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.22 մ.I, թ.33–33դարձ, 44–45; գ.158, թ.65–69; ց.2, գ.43, թ.1–4; գ.45, թ.1–4; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.963, թ.80–87; գ.1013, թ.1–10; Վրացյան Ս. Նշվ.աշխ., էջ 258–261: Մ.Արզումանյանի նամակի մի մասը տե՛ս Нагорный Карабах, с.132–133:

վորումներ և մթերքը այդպես էլ չընկան ՀՀ-ի տնօրինության ներքո:

Անհնարին էր համարվում և գաղթականների վերադարձը: Մարտի 28-ի Վ. Թոմսոնի զրույցը Ա.Խատիսյանի, Հ.Հախվերդյանի, Ս.Տիգրանյանի հետ Երևանում անցել է գեներալի անբարյացակամության մթնոլորտում, հատկապես, երբ խոսում էին Խ.Սուլթանովի՝ որպես Ղարաբաղի նահանգապետի մասին: ՀՀ ղեկավարները ներկայացրին գրավոր ցանկություններ: Այդ փաստաթղթից սկսվեց Ղարաբաղի, Նարուր-Նախիջևանի, Զանգեզուրի և Կարսի մարզի ճակատագրի շազկապված քննարկումը, որը տևեց մինչև օգոստոսի 22-ը: Անգլիացիները հանձնել են ՀՀ-ին Նախիջևանը և Կարսի մարզը (19.04), որտեղ ունեին բանակ: Հրաժարվել են Զանգեզուրի հավակնություններից, քանի որ այնտեղ փակեցին նրանց ճանապարհը: Բայց Ղարաբաղը ՀՀ-ում պահել չհաջողվեց: Եթե Կարսում Ալբիոնի ուժերը համագործակցեցին Երևանի հետ, ապա Ղարաբաղում նրանց օգտագործեցին տեղական հայության դեմ: Սա կարող էր ծառայել «կայսերական հավասարակշռությանը», երբ տեղական գժտությունը անհրաժեշտ է դարձնում արտաքին միջամտությունը: Ընդգծենք. Կարսն ու Նախիջևանը հավասարակշռվում էր Ղարաբաղ - Զանգեզուրով: Վերջինի մերժումը դրդեց Ջ.Միլնին օգտվել ՀՀ իշխանության հետ Անդրանիկի անհամաձայնությունից, և մայիսին հեռացնել նրան:

Ուստի մարտի 28-ի զեկուցագրում պահանջվում էր Ղարաբաղի հայկական մասը հայտարարել Ադրբեջանի ՆԳՆ-ին ենթարկված Ղարաբաղյան գեներալ-նահանգապետությունից դուրս, մաքրել երկրամասը ադրբեջանական ջոկատներից, այնտեղ ճանաչել Ազգային խորհրդի իշխանությունը: «Հայկական կառավարությունը, - ասվում էր ուղերձում, - համարում է այս մարզը... Հայաստանի անբաժանելի մաս: Կառավարման հսկողությունը, որը կսահմաներ անգլիական հրամանատարությունը, կկարողանար իրականացնել միայն անգլիացի անձը»: Կառավարությունը հիշեցնում էր ազգու միջոցների անհրաժեշտության մասին՝ Շարուրի, Նախիջևանի, Կաղզվանի գյուղերը գաղթականներին վերադարձնելու համար, բողոքում Կարսից ու Սարիգամիշից պաշարների դուրսբերման դեմ, դիմում 30-հազարանոց բանակի համար հանդերձանք և 10 մլն փամփուշտ ձեռքբերման հարցով, օգնություն խնդրում Բաքվից գնված պարենը բերելու գործում: Զեկուցագիրը ամրակնդվում էր Ս.Տիգրանյանի՝ Երևանում բրիտանական ռազմական ներկայացուցիչ Կ.Տեմպերլիին ուղղած նամակով, որում բողոքարկվում էին Վ.Թոմսոնի և Ջ. Ֆորբեսոյե-Ուոքերի ուղերձները Խ.Սուլթանովի նշանակման մասին:

Բուն հանդիպման ժամանակ Վ.Թոմսոնը չեչտում էր տնտեսական գործոնը ու հավաստիացնում. «Պետք է ենթադրել, որ Ղարաբաղի հարցը շուտով լուծվելու է Փարիզում: ...Այդ ամենը ժամանակավոր է և առայժմ հարկավոր է պահպանել»: Կարսում բրիտանական «զորքերի /քանակը/ մեծ չէ և դրանց հետագա հավելման հույս չկա, ուստի փախստականների վերադարձի հարցը առայժմ գտնվում է անորոշ վիճակում»: Անգլիական հրամանատարությունը ըստ ամենայնի կպաշտպանի «նրանց՝ դարձի ժամանակ, ընդհուպ հին ռուսական սահմանը»: Բայց նրանք, ովքեր հատելու են սահմանագիծը, դա «անելու են իրենց սեփական ռիսկով»: Գեներալը հույս էր հայտնում, որ մայիսի 1-ի վիճակով բոլոր շրջաններում երևալու է «հայկական զորքերի անհրաժեշտ քանակով պաշտպանված վարչությունը»: Սակայն Ղարաբաղի հարցում նա անկոտրում էր: Խ.Սուլթանովին վերաստորադասելու են Գ. Մոնք-Մեյսոնին, հայկական կառավարությունը կարող է Շուշի ուղարկել բրիտանական միսիային կից նրա ռազմական կցորդին, ադրբեջանական զորամասերը չեն անցնելու Խանքենդիից

դուրս, գեներալ-նահանգապետությունը չի ներառի Զանգեզուրը, թեև անգլիական վարչություն չի լինելու, իսկ Խ.Սուլթանովը մնալու է: Նա «մեզ հարկավոր է, բայց սա չի նշանակում մշտական ադրբեջանական գերիշխանություն երկրամասում»:[13] Նրա համաձայնությամբ Մ.Արզումանյանը, քարտուղար Գ.Տեր-Օհանյանի հետ մեկնեցին շրջան, այնտեղ ուսումնասիրելու իրադրությունը: Ապրիլի 29-ին նրանք ժամանեցին Արցախ, որտեղից նրանց վտարեց գեներալ Դ.Շատլվորթը: Ապրիլի 30-ին Հայաստան այցելած Ջ. Միլնը մատնացույց է անելու Ա.Խատիսյանին, որ հենց Վ.Թոմսոնն է պատասխանատու Անդրկովկասի բոլոր գործերի համար:

Այնուամենայնիվ, մարտի 28-ի և ապրիլի 30-ի զրույցների ժամանակամիջոցում կատարվեցին նշանակալի փոփոխություններ: Ապրիլի 2 - 3-ին Ջ.Միլնը ժամանեց Բաթում, որտեղ Թիֆլիսից կանչեց և Վ.Թոմսոնին: Ապրիլի 4-ի հրամանի համաձայն, Վ.Թոմսոնը ստեղծում է վարչության նոր համակարգ՝

Ջ.Միլն
Կ.Պոլիս
Ջ.Հարինգտոն
գեներալ-լեյտենանտ
13.11.1920
Վ.Թոմսոն
գեներալ-մայորի պաշտ.
10.03-12.05.1919
Թիֆլիս
Ջ.Ն.Կորի
գեներալ-մայոր
12.05-6.09.1919
զորքերի մեկնելը 11.09.1919

Վ.Քուկ-Կոլլիս	Ք.Մ.Դեվի	Ֆ.Ս.Մոնտեգյու-Բեյտս	Դ.Շատլվորթ
բրիգ.գեներալ	բրիգ.գեն	բրիգ.գեներալ	գեներալ
5.12.1918	4.04-14.06.1919	4.04.1919	9.03-24.08.1919
Բաթում	Երևան	Թիֆլիս	Բաքու

Ջ.Ջ.Պլաուդեն
փոխ-գնդապետ
բրիտ.ռազմ.
ներկայացուցիչ
12.06-28.08.1919

Ս.Օլիվեր
լեյտենանտ
Արդահան
16.06-2.09.1919

Ք.Մ.Դեվի
բրիտ. զորք. հրամանատ.
Կարս-Նախիջևանում
Ս.Ղորղանյան
քաղաքաց.նահանգ.
10.01-19.04.1919
գեն.նահանգապ.
19.04-30.10.1920
Կարս

Գ.Վարշամյան
նահանգապ.
3.04-25.07.1919
Նախիջևան

---

[13] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 2, գ.962, թ.22-24, 50-55; գ.964«Ա», թ.24-27, 56-61; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12, մ.II, թ. 123-124, 174-176; գ.32, թ.93-93 դարձ, 173-177; ֆ.200, ց.2, գ.121, թ.1-2; Խատիսյան Ա., նշվ.աշխ., էջ 179-180; Нагорный Карабах, с.140-143: Hovannisian R. Op.cit., vol.I, p.173-ում ամսաթիվը բերվում է որպես մարտի 27-ը:

Նույն օրերին Հ.Քաջազնունու գլխավորած Մինիստրների խորհուրդը լսեց «գեներալ Հ.Հովսեփյանի զեկուցումը Կարսի անգլիական ներկայացուցիչ Ա.Ռոուլինսոնի (այսպես է անվանված Դաշնակցային սպա-հսկիչը) հետ ունեցած խոսակցության մասին - անգլիական զորքերի հեռանալու հավանականության առթիվ: Որոշեցին. հանձնարարել Արտաքին գործերի Մինիստրին Զինվորական մինիստրի հետ միասին խոսել Անգլիական ներկայացուցչի հետ և պարզել այն հեռանկարը, որն սպասում է հայ ժողովրդին Անգլիական զորքի հեռանալու դեպքում»: Այնուհետև, ներքին գործերի նախարար Ա.Խատիսյանը մեկնեց Թիֆլիս, որտեղ ապրիլի 6 - 8-ին երեք անգամ հանդիպեց Վ.Թոմսոնի, գեներալներ Վ.Բիչի (6-ին ու 7-ին), Ա. Բրաֆի և Վ.Ասսերի հետ: Խոսք գնաց նույն շրջանների մասին. ներառյալ ՀՀ 40-հազարանոց բանակի պահանջը: Ճշգրտվեց երկրամասերի հանձման ընթացքը, թեև Ղարաբաղի հարցում առաջարժում չեղավ: Ապրիլի 11-ին ՀՀ-ի ՄԽ-ը լսեց ճամփորդության մասին հաշվետվությունն ու երկու «ոչ» ձայներով ընդունեց «Ղարսի, Շարուրի և Նախիջևանի ռայոնները գրավելու» որոշումը, «ցանկություն հայտնելով Անգլիական զորքերի ավելի երկար մնալու նկատմամբ»: Ինչ վերաբերում է ցանկությանը, ապա թեև ռազմական շտաբի պետ, գեներալ-մայոր Հ.Հախվերդյանը «հերյուրանք» էր անվանում նրանց մոտալուտ գնալը, բայց և նշում էր Կարսում անգլիական զորամասերի փոխարինումը գուրկոսներով,[14] և Ս.Տիգրանյանին հասցնում Ա.Ռոուլինսոնի ասածը Դաշնակիցների միջև «մեծ թյուրիմացությունների», բրիտանական օկուպացման ժամանակավոր բնույթի և զորքերի մոտալուտ դուրսբերման հնարավորության մասին: Էլ ավելի միանշանակ էր գրում Ա.Խատիսյանը Ա.Ահարոնյանին. Անդրկովկասից անգլիացիների հեռանալու դեպքում «միանգամայն անհրաժեշտ է նրանց նախնական ու վաղօրոք փոխարինումը Դաշնակից Տերություններից մեկի զորքերով»:[15]

Հարկադրված ենք նշել, որ իրականում հայկական սահմանների ընդլայնումը հիմնված էր միայն օտար զորքերի առկայության վրա: Նրանց հեռանալու հեռանկարը ծնունդ չի տվել վիթխարային որևէ ծրագրի, թե ինչ են անելու ազգն ու պետությունը այդպիսի պարագայում: Իրադարձությունների նման զարգացումը Մինիստրների խորհրդում չէր քննարկվում: Թեև առայժմ տարածքի վերականգնումը շարունակվում էր:

Թիֆլիսյան քննարկումների հետևանքով, ապրիլի 9-ի դրությամբ, Ռ.Դեվին Կարսի իր կայազորը հասցրել էր 2.500 հոգու, ընդ որում, այդ ուժերի մի մասը գալիս էր ուղիղ Բաթումից: Այնուհետև, նա հրապարակեց Վ.Թոմսոնի համապատասխան հոչակագիրը և ամսի 12-ին արձակեց մեջլիսը, որի ղեկավարությանը Կ.Պոլիսով ուղարկեց Մալթա: Հաջորդ օրը գեներալը մարզում մտցրեց ռազմական դրություն՝ սկսելով խուզարկություններ, խլած զենքի արտահանում և ոչնչացում: Ապրիլի 19-ին բրիտանական ռազմական նահանգապետ Ջ.Ա.Պրեստոնը իր հիմնական

---

[14] Հնդիկներից կազմած գնդերի անվանումներ են՝ փենջարցիներ, այդ թվում առանձնացված՝ սիկհեր, ռաջպուտներ, և նրանց թվում առանձնացված՝ գուրկոսներ:

[15] FO 371/3667, 84449/11067/58; British Documents, vol. I, p.389-390; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.86-88, 161-164 դարձ, 177-177 դարձ; գ.32, թ.86-87, 176-177; ֆ.200, ց.1, գ.22 մ.II, թ.60-60 դարձ; 68; ՀՀ ՀԲԿԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.962, թ.45-48, 54-55; գ.963, թ.62-63; գ.964«Ա», թ.61-62: Ա.Խատիսյանի հեռագիրը պահպանվել է միայն ռուսերեն լեզվով:

լիազորությունները հանձնեց Ս.Ղորղանյանին, իսկ ապրիլի 23-ից - 28-ը Ջ.Միլնի և Վ.Թոմսոնի աչքի առաջ Հայկական 2-րդ հետևակային գունդը Հ.Հովսեփյանի ղեկավարությամբ Կարս քաղաքում և ամրոցում փոխարինեց գուրկոսներին ու սիկհերին, ինչից հետո անգլիացիները եկել էին Երևան, որտեղ գլխավոր հրամանատարը ապրիլի 30-ին զրույց էր ունեցել ՀՀ կառավարության հետ:

Դա բրիտանացի ամենաբարձրաստիճան հրամանատարի առավել կարևոր այցն էր: Մեջբերեմ հանդիպման հիմնական թեմաները. 1) Հայ զորամասերը պարենով ու ռազմամթերքով մատակարարելու խնդրանքներին գեներալը պատասխանեց, որ «պատերազմը ավարտվել է, և կարիք չկա բանակն ուժեղացնելու»: Բայց այդ «հարկավոր է թեկուզ կարգը պահպանելու համար», - հիշեցնում է Ա.Խատիսյանը: Ակնհայտ էր, որ իրական ուժի բացակայությամբ հնարավոր չէ հաստատվել ակնկալվող շրջաններում, սակայն Ջ.Միլնը առաջարկեց բավարարվել «լավ ժանդարմերիայով»: 2) Իր բանակի գնալու մասին նա հաստատեց, որ երկու շաբաթ անց զորամիավորումները կթողնեն Կարսի մարզը, իսկ քիչ ավելի ուշ՝ Նախիջևանը ևս: 3) Առանց Կ.Պոլսի թույլտվության, գաղթականներին չի թույլատրվում ուղարկել Թուրքահայաստան, իսկ «միայն հայկական զորքերի ուղեկցությամբ [նրանց վերադարձի մասին] խոսք էլ չի կարող լինել»: Ջ.Միլնը ասում էր, որ ի վիճակի չէ դրա համար անգլիական զորամասեր տրամադրել, որ ամերիկացիները չեն կարողանա այնտեղ մարդ կերակրել, իսկ Էրզրումի շրջաններ «գնալը դեռևս վտանգավոր է»:

Այս ամենը ճիշտ էր, թեպետ այդպիսի պարագայում ՀՀ-ն առավել ևս կարիք ուներ մարտունակ զինված ուժերի:

4) Վրաստանի սահմանների և 5) Ղարաբաղի հարցում վիճակը թողեցին անփոփոխ, թեև Ա.Խատիսյանը նորից խնդրեց այնտեղ նշանակել անգլիացի գեներալ-նահանգապետ և ճանաչել Հայոց ազգային խորհուրդը: 6) Օլթիի առնչությամբ գլխավոր հրամանատարը թույլատրում էր գրավել Բարդուսչայ-Մերդենեկ-Արդահան-Խոզապին գիծը: Նա խորհուրդ չէր տալիս շտապել այդ գոտու գրավման հարցում, իսկ հյուսիս-արևմուտքում գտնվող հողերը պետք է մնային անգլիական վարչության իրավասության տակ: Գեներալը խոստանում էր 7) հետապնդել հայկական քարոզչությունը Ղարաբաղում և 8) ավելի գործուն դարձնել Ա.Բրաֆի երկաթուղային գործերի հանձնաժողովը: 9) Իսկ ինչ վերաբերում էր Կարսից ռազմամթերքի շարունակվող արտահանմանը, ինչի դեմ ապարդյուն բողոքում էին Հանրապետության ղեկավարները, սկսած Թ.Նազարբեկյանից ու Մ.Սիլիկյանից, ընդհուպ Ա.Խատիսյանը՝ ապա Ջ.Միլնը պատասխանեց. «Կարսում ամեն ինչ շատ-շատ է, հատկապես հանդերձանքը, դեռևս ոչ բոլոր ամրոցներն են ստուգվել, եթե անգլիացիները այնտեղից արտահանել են թնդանոթներ ու փամփուշտներ, ապա նրանք ուղարկվել են գեներալ Ա.Դենիկինի բանակը: ... Կարծում եմ, որ Հայաստանի ռազմական նախարարը հնարավոր կհամարի արդարացի կիսել Կարսի դույքը»: Ու թեև Ա.Խատիսյանը գանգատվում էր, որ Վ.Թոմսոնի խոստացած 5 մլն գնդակից ՀՀ-ն ստացել է ընդամենը 2 մլն, երկու ավագ սպաները պատասխանեցին, որ այդքանը բավական են համարում: Եզրափակիչ արտահայտությամբ Ջ.Միլնը թույլատրեց հանել ամրոցից ամեն ինչ՝ բացառությամբ ռազմամթերքի և շնորհակալություն հայտնեց հայերին՝ Դաշնակիցներին հավատարիմ մնալու համար:

10) Նախիջևանի մասին խոսել էր Վ.Թոմսոնը: Նա հրամայեց, որ «Հայ զորքերի ու գաղթականների ոչ մի առաջխաղացում չլինի մինչև գեն. Ք.Դեվիի գայը», խոստացավ հասցնել օգնական ուժեր և հորդորեց ադրբեջանցիներին որևէ փոխհատուցում տալ: «1914թ. ռուս-թուրքական սահմանի մասին խոսակցությունից պարզվեց, որ անգլիացիները այսօր էլ ճանաչում են այդ սահմանը, իսկ Ա.Խատիսյանը հայտարարեց, որ հայ ժողովրդի կարծիքով, այս սահմանը այլևս գոյություն չունի»: Այնուհետև, բարձրաստիճան հյուրն ու կառավարության ղեկավարը ուղևորվեցին Էջմիածին՝ կաթողիկոսի մոտ, իսկ երեկոյան ժամը 10-ին Ջ.Միլնը մեկնեց Թիֆլիս: Նկատենք, որ տվյալ հանդիպման մասին հաշվետվություններից հատկապես հետաքրքիր է Երևանում ֆրանսիական զինվորական ներկայացուցիչ կապիտան Ա. Պուադեբարի գաղտնի զեկուցագիրը Կովկասում զինվորական միսիայի պետ Պ.Օ.Նարդինյիին, որն արդեն մայիսի 8-ին ստացել են ՀՀ ԱԳՆ-ում:[16]

Գեներալը Բոսֆոր էր վերադառնալու մայիսի 19-ին: Այդ ժամանակամիջոցում Ա.Խատիսյանը Վ.Թոմսոնի հետ բանակցելու էր (մայիսի 3-ին) Ղարաբաղի ու Զանգեզուրի վերաբերյալ: Վերջինիս Ջ.Միլնը փոխելու էր մայիսի 10-ին, նրա փոխարեն Կ.Պոլսից ուղարկելով իր մարդուն՝ գեներալ-մայոր Ջ.Ն.Կորիին: Հանձնելով պաշտոնը, Վ.Թոմսոնը նույն օրը հաղորդելու էր երկրամասի կառավարություններին, որ «բրիտանական զորքերը Անդրկովկասում պետք է փոխարինվեն իտալական բանակի զորքերով»: Գնալով, նա Ջ.Միլնի անմիջական հրամանով կազմակերպեց Անդրանիկի մեկնումը իր 25 մարտիկներով Հայաստանից Թիֆլիս, այնուհետև Բաքուից, Կ.Պոլսով՝ Փարիզ ու Լոնդոն:[17] Սա, Դ.Շատլվորթի կողմից ղարաբաղյան համագումարը հրավիրելու (23.04), երկրամաս այցելությունից հետո նրա զեկուցման (26.04), քաղաքական ձերբակալությունների, ադրբեջանական ջոկատներն այնտեղ մտցնելու և ապրիլի 29-ին բոյկոտ սկսելու թույլտվության հետ միասին, անշուշտ, հող էր նախապատրաստում Նուշիի վրա հունիսյան հարձակման համար:

Մայիսի 3-ին Ա.Խատիսյանի և անգլիական հրամանատարության միջև Թիֆլիսյան բանակցությունների ժամանակ Վ.Թոմսոնը հայտնեց. «Զեկուցումից երևում է, որ Ղարաբաղի գործերին ձեր միջամտությամբ դուք կարծես թե պատերազմ եք հայտարարում Անգլիային»: Դ.Շատլվորթի խորհրդով, ՀՀ կառավարությանը սպառնացին կասեցնել գաղթականների հայրենադարձությունը Երևանից հարավ, քանի դեռ «քարոզող

---

[16] ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.104-106, 112-113, 141-150; ֆ.200, ց.1, գ.22 մ.II, թ.106-107 դարձ; ց.2, գ.55, թ.2; ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց.2, գ.962, թ.16, 39-44, 60, 173-174; գ.963, թ.131; գ.964, թ.1-5; գ.964 «Ա», թ.18, 43-50, 149-150; գ.1001, թ.46-54; գ.1021, թ.1-7; գ. 10-23, թ.1-6; գ.1025, թ.1, United States National Archives, Record Group 256, 184 021/8, Hovannisian R. Op. cit., vol.I, p.216-224.

[17] Զորավարը Բաքուից մեկնեց մայիսի 15-ին «Էս Էս Կատորիա» նավով: Ամսի 20-ին, Կ.Պոլսում նա Վ.Դիբբոնի մասնակցությամբ փոխադրվեց «Էս Էս Էնգրի» նավը, իսկ 24-ին, Սալոնիկում՝ «Էս Էս Էջիպտ», որով հունիսի 1-ին ինքը և իր հինգ ուղեկիցը ժամանեցին Մարսել: Տես. Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917: Պոսթոն, Գայքար, 1924, էջ 148-152; Քաջունի Ե., Անդրանիկի եւ Հայկական առանձին հարուածող զօրամասի հետ:Նիւ Ճըրզի, Ազգ, 1976, էջ 172-181; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.110; Վրացյան Ս. Նշվ. աշխ., էջ 349; Hovannisian R. Op. cit., vol.I, p.191, 212.

պատգամավորները» չեն թողնել Ղարաբաղն ու Զանգեզուրը, որոնք պետք է անվերապահորեն հնազանդվեին Բաքվին: Ի պատասխան դրա, Ա.Խատիսյանը Ղարաբաղն անվանեց Հայաստանի անբաժանելի մաս՝ պաշտպանելով նրա սեփական զինված ուժեր ունենալու իրավունքը: ՀՀ-ն կարող է խորհուրդ տալ Զանգեզուրի Ազգային խորհրդին՝ քոչվորներին անցկացնել միայն անգլիական զորքերի և հայ ու մահմեդական պահակախմբի ուղեկցությամբ: Բայց Նախիջևանի գաղթականների վերադարձը «Ղարաբաղյան հարցի հետ կապելը կնշանակեր համակերպվել թուրքական քաղաքականության սկզբունքներին. անմեղ մարդկանց վրա դնել երրորդ դեմքի արարքների, տվյալ պարագայում՝ հայկական կառավարության ենթադրվող գործողությունների պատասխանատվությունը»: Վ.Թոմսոնը հարկադրված էր հրաժարվել հայկական բանակի ու գաղթականների վերադարձը կասեցնելու պահանջից, այնուհետև զրույցի շարունակությունը հանձնարարելով Վ. Բիչին:[18]

Թե որքան խիստ էր անգլիացիների ճնշումը, ցույց է տալիս (9.05) Դ.Շատլվորթի, Զանգեզուրի Խորհրդի նախագահ Ս.Մելիք-Ստեփանյանի և նախագահության անդամներ Ա.Բակունցի, Ա.Շիրինյանի, Ա.Շախմազյանի ու Եսայանի հետ հանդիպման գրառումը, երբ առաջինը Հ.Արղությանի ուղեկցությամբ այցելել էր Գորիս և Շուշի: «Ադրբեջանական կարգերին հակառակվելով, դուք հակառակվում եք Անգլիային, - վախեցնում էր գեներալը, - դուք ունի՞ք պատասխան, ինչ է Ձեր պատասխանը»: Ժողովուրդը ողջ ուժերով կդիմադրի Ադրբեջանի իշխանություններին, պատասխանեց Խորհրդի նախագահը, իսկ եթե պահպանենք մեր ազատությունը, ապա կկարողանանք համաձայնության գալ: Բաքվի «կարգերը պիտի մտցվեն», պնդում էր գեներալը, հակառակ դեպքում չեք ստանա դրամական ներդրումներ ու կմնաք ողջ աշխարհից, նույնիսկ Հայաստանից ու Նախիջևանից կտրված: Մենք ուզում ենք «Հայաստանի մի մասը կազմելու, և որի համար ոչ մի միջոցի առաջ չենք կանգնի»,- հակազդեց Ս.Մելիք-Ստեփանյանը:

Հյուրը ստեց, ասելով, թե իբր ՀՀ-ն համաձայնվել է երկրամասը հանձնել Ադրբեջանին, ինչը անմիջապես հերքեց Հ.Արղությանը. «Ընդհակառակը, Հայաստանը այս երկրամասերը իր անբաժան մասն է համարում»: Երևանում գեներալ Ջ.Միլնը «համաձայնվել է թողնել իրերի դրությունը մինչև վեհաժողովի որոշումը»: Դուք ապստամբում եք Անգլիայի դեմ, - հայտարարում էր Բաքվի ջատագովը, - դուք հակաճառում եք «անգլիական զորավարի զորքերին, որոնց առաջ տիեզերքում այլևս խոնարհված է ամեն ինչ: ... Ունե՞ք դուք որևէ պատասխան, դուք կարո՞ղ եք պատասխանել»: Մեր փոքր ժողովուրդը միշտ պաշտպանում էր սեփական տունը թշնամիներից, բացատրում էր Դ.Շատլվորթին Ս.Մելիք-Ատեփանյանը: Մենք չենք հասկանում, թե ինչու են Ադրբեջանի դեմ մեր գործողությունները թշնամական համարվում ձեր երկրի համար: «Եթե Անգլիան ուզում է մեր երկիրը հանձնելու Ադրբեջանին»՝ կռվելու ենք մինչև

---

[18] FO 371/3661, 79984/1015/58; British Documents, vol.1, p.508 - 509; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.32, թ.141-143; ֆ.200, ց.1, գ.122, թ.1-2; ց.2, գ.55, թ.3; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց.2, գ.963, թ.132; գ.1001, թ.60-66: Հաչակագրի անգլերեն բնագիրը տես՝ RG 256, 184.021/15.

վերջ: Իսկ եթե խաղաղության վեհաժողովը կվճռի մեզ չտալ մեր երկիրը, կգնանք այնտեղ, որտեղ մեզ կտրամադրեն նոր հայրենիք:

Դ.Շատվորթը արձագանքեց ևս մեկ ստով. «Բայց սա հենց վեհաժողովն է որոշելու, այս երկրամասը Ադրբեջանին առայժմ պատկանելը նախատեսված է վեհաժողովում»: Մենք հենց հիմա պատրաստ ենք հանապարհ ընկնել, նրա ասածը կտրեց Խորհրդի նախագահը. «միայն, գեներալ, տվեք մեզ գրավոր դոկումենտ, հենց Ձեր ստորագրությամբ, որ այդ վճիռը վեհաժողովի վճիռն է: Ոչ, այդպիսի դոկումանտ ինձ անհնարին է տալ», - նահանջեց հրամանատարը: «Մենք բավարարված ենք գգում մեզ», - ընդհատեց խոսակցությունը Ս.Մելիք-Ստեփանյանը: Բրիտանացին խոստացավ դիմել «ուր հարկն է», սպառնաց այլևս չայցելել ու կարգագրություններ սպասել Պոլսից կամ Լոնդոնից՝ հանելով, այնուամենայնիվ, Փարիզն իր ցուցակից: Գանգատվելով Տեր գյուղի մոտ իր ջոկատին կանգնեցնելու համար, նա Հ.Արզությանին և Խորհրդի անդամ Ա.Նիրինյանին փորձեց օգտագործել, վաշտի հրամանատար Ն.Հովսեփյանին ու Կալմակովին կալանավորելու համար:[17] Նշմարենք, որ տեղերում բրիտանացիք հաճախակի գործում էին սեփական հայեցողությամբ, միայն հետագայում տեղյակ պահելով իրենց նախարարությունը: Սա վերաբերում է ինչպես Ջ.Միլնի կողմից զորամիավորումների կենտրոնացմանը՝ Կարսի չուրան ցրելու համար, այնպես էլ տվյալ պարագային: Նրանք ցանկանում էին «դրսի աշխարհը անտեղյակ պահել Կովկասի անցուդարձերին, որոնք կարող են քաղաքական աշխարհի ուշադրություն դրավել և թերևս փոխել տալ բրիտանական հրամանատարության ինքնագլուխ կարգադրությունները»,- հաստատում էր այդ դրույթը Ա.Խատիսյանը Ա.Ահարոնյանին հասցեագրած ուղերձում:[20]

Բայց ամենակարևորն այն էր, որ մայիսին Հայաստանը նորից միացրեց Շարուր-Նախիջևանի շրջանները, այնտեղ վերականգնելով հանրապետության վարչակարգը: Մայիսի 3-ին հրապարակվեց Բ.Դեվիի կողմից վավերացված Դրոյի հռչակագիրը, որը պաշտոնապես տեղեկացնում էր Նախիջևանում ՀՀ իշխանության ծավալման մասին: Նույն օրը, Թիֆլիսում Ա.Խատիսյանի ու Բ.Դեվիի հետ հանդիպման ժամանակ Վ.Թոմսոնը արդեն երկրորդ անգամ (ապրիլի 23-ի փորձից հետո) ապարդյուն ջանում էր կասեցնել գաղթականների ու հայկական զորքի առաջխաղացումը՝ պահանջելով հնազանդեցնել Զանգեզուրը Ադրբեջանին: Հիշեցնելով, որ 18.000 գաղթականներից 8.000 մարդ արդեն մեռել է, Ա.Խատիսյանը համաձայնվեց ընդհատել արշավանքը, սակայն առարկեց ներկայացված պահանջին: ՀՀ դիրքերը եռանդով պաշտպանեց և Բ.Դեվին, որը փետրվարի 15-ի հրամանի համաձայն, դեռևս ապրիլի 3-ին վերացրել էր Նախիջևանի ռազմական նահանգապետությունը, երբ Ջ.Սիմպսոնի հաջորդ էր նշանակվելու Գ.Վարշամյանը՝ ունենալով Ագուլիսն իրբև նստավայր: Տեղի տալով նրանց եռանդին, Վ.Թոմսոնը մայիսի 10-ին Երևան է ուղարկել կառավարությանն

---

[19] ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.18-21, 115-117, 111-117, 171; ֆ.200, ց.2, գ.37, թ.9-17; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց.2, գ.962, թ.17-21, 33-38, 60; գ.964«Ա», թ.18-24, 66-67; ց.5, գ.446, թ.1; US NA, RG 256, 184.021/23; 184.01602/60, Нагорный Карабах, с.202-210:

[20] ՀՀ ՊՊԿԱ, ֆ.200, ց.2, գ.55, թ.1-5; ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց.2, գ.963, թ.130-136:

ուղղված մի նամակ, որով հաստատվում էր շրջանի փոխանցումը և ռազմական նահանգապետության վերացումը: Միաժամանակ, նա կարծում էր, որ ՀՀ-ի ուժերը հարկավոր է սահմանափակել 2.000 սվիններով, 2 դաշտային թնդանոթով ու հեծելավաշտով: Մինչև մայիսի 1-ը Ջ.Սիմպսոնը իր ջոկատներով պարտավոր էր զբաղեցնել մի շարք կարևորագույն գյուղեր, հակկով խաղաղ բնակչության վերադարձը: «Ժամանակավոր վարչությանը խորհուրդ է տրվում ներդաշնակորեն աշխատել տեղական տարրի մասնակցությամբ», - հանձնարարում էր գեներալը:

Ի կատարումն այդ ամենի, ՀՀ կառավարության ղեկավարը և 27-րդ դիվիզիայի հարավային թևի հրամանատարը մայիսի 13-ին նոր նահանգապետին իր աշխատակիցներով հասցրել են երկրամաս, որտեղ Ռ.Դեվին հայտարարեց, որ դաշնակից տերությունների վճռով Շարուրն ու Նախիջևանը ժամանակավորապես միավորվում են Հայաստանի հետ: Տեղական երևելիները պահանջում էին հեռացնել ՀՀ ծառայողներին և արգելել հայերի տունդարձը: Իր հերթին, Ա.Խատիսյանը խոստացավ խառն վարչություն, բանակի բարձր կարգապահություն ու ավելացրեց, որ հայ դատախազները կարող են հաստատել նրանց իրավունքը սեփական տների ու գույքի հանդեպ: Ուղիղ մեկ շաբաթ անց ՀՀ ռազմամիավորումները մտան Նախիջևան, իսկ 22-ին Ռ.Դեվին Ջ.Կորիի հետ միասին կատարեցին իրենց վերջին տեսչական շրջագայությունը երկրամասով: Մայիսի 23-ին ՀՀ կառավարության հետ հանդիպման ժամանակ Ջ.Կորին ունկնդրեց անգլիական զորքերին դոնե մինչև հունիսի 15-ը պահելու խնդրանքը և Ջ.Ջ.Սիմպսոնին հրաման արձակեց պատրաստել նրա գումարտակի դուրսբերումը մայիսի 30-ին: Մի շաբաթ անց նա տեղեկացրեց Ա.Խատիսյանին, որ գնդապետին փոխարինելու է կապիտան Ֆ. Լ.Շվինդի գինվորական միսիան, իսկ բրիտանացիներին հետ են կանչելու «մոտակա օրերի ընթացքում»: Կատարելով այս հրամանը, շրջանում տեղավորված ռազմատների գումարտակը հունիսի 1 - 4-ը թողել է երկրամասը:

Նույն հունիսի 4-ին, հանդես գալով ՀՀ Խորհրդարանում, մինիստր-նախագահը հերթական հանրագումարի էր բերում ամբողջ իրադրությունը. «Մեր տերիտորիան աստիճանաբար ընդլայնվում է: Հերթական է Ալաշկերտի հովտի ու Սարիղամիշ-Էրզրում երկաթուղու գրավումը... Այսուհետև Միացյալ Հայաստանի միասնական կառավարությունը իրավասու կլինի վարչություն հաստատել այն շրջաններում, որոնք մենք աստիճանաբար գրավելու ենք...

Կարսի, Շարուրի ու Նախիջևանի շրջանների նվաճումը անցել է առանց մեկ իսկ գնդակ արձակելու: Սրանով մենք առաջին հերթին պարտական ենք մեր զորքերի և անգլիական հրամանատարության վարքին, որը փայլուն կերպով կազմակերպեց նշված շրջանների գրավումը: Մահմեդական բնակչությունը սիրալիր դիմավորեց մեր գաղթականներին ու մեր իշխանությանը, չնայած Կարսում, Նախիջևանում «մեզ դիմավորեցին սառնությամբ, իսկ Օլթիում նույնիսկ թշնամաբար»:[21]

Արդեն հունիսի կեսերին - հուլիսին ՀՀ կառավարությունը խնդրելու էր Ջ.Կորիին «բրիտանական ջոկատ ուղարկել Նախիջևան», որտեղ թուրքական գործակալները ջանում էին կազմակերպել մահմեդականների

[21] Ibid., գ.962, թ.114-118; գ.964 «Ա», թ.97-103; ՀՀ ՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.35, թ.87-89:

ապստամբությունը: Օգնությունը պահանջվում էր «Թեկուզ մինչ Թուրքերի կողմից հաշտության ստորագրումը կոնֆերանսում», քանի որ Հայաստանի ղեկավարությունը «հաստատապես վստահ էր, որ Ջերդ Մեծության բանակի թեկուզ ոչ մեծ ջոկատի այնտեղ ներկայությունը անմիջապես կգսպի պանթուրքական գործակալներով հրահրվող մահմեդականներին, կհերքի սուտ լուրերը Կովկասից Դաշնակցային ուժերի գնալու մասին»: Բայց խնդիրն այն էր, որ նրանց հեռանալու լուրերը սուտ չէին:[22]

Հունիսի 7-ին կայսերական ուժերը արդեն մեկնել էին Նախիջևանից, 8-ին վերջին զրահամեքենաները ճանապարհ են ընկնել Կարսից, իսկ մեկ օր անց, Ջ.Միլնը 27-րդ դիվիզիային հրամայեց պատրաստվել Կովկասից մեկնելու համար: Ամսի 12-ին Ք.Դեվին դադարեցրեց իր դիվիզիայի հարավային թևի գլխավոր հրամանատարի գործունեությունը, Ա.Խատիսյանին պաշտոնապես ներկայացնելով Երևանում իր երկրի ռազմական ներկայացուցչին՝ փոխ-գնդապետ Ջ.Գլաուդենին:

Կատարելով Կ.Գոլսից եկած հրամանը՝ զորամիավորումները կենտրոնանում էին բրիգադային շտաբ-կայաններում, հետո տեղափոխվում սևծովյան ափ: Ինչպես և հարկ էր սպասել, առավել երկար ժամանակ կայսերական զորամասերը հապաղել էին Բաքվում: Մինչև Հունիսի վերջը այնտեղ վերադարձան 84-րդ փենջաբցի գնդի ուժերը, օգոստոսի 16-ին մայոր Ռ.Տիրերը փակեց միսիան Շուշիում, 18-ին նրա ստորաբաժանումը բեռնվել է էշելոնը՝ Բաթում մեկնելով փենջաբցի հիմնական զանգվածի հետ, իսկ 24-ին Դ.Շատլվորթը փակեց իր շտաբը:

Նրանց հապաղումը Անդրկովկասում Հայաստանի վրա նստեց Ղարաբաղի կորուստը: Քանի որ հակառակ ՀՀ ղեկավարության խնդրանքին՝ ուշացնել տարահանումը, ամառվա մնացած մասը լիովին ծանրաբեռնված էին երեք խնդիրներով. Էրզրումում Թուրքական ուժերի անընդհատ աճը, Կարսից զենքի անդադար արտահանումը և արյունահեղությունը Ղարաբաղում: Զարմանալ կարելի է Կարսի ռազմական պահեստների առատության ու հանրապետության ղեկավարության հանցավոր անօգնականության վրա: Եթե հայկական կողմը միայն բողոքում էր, ապա սահմանի մյուս կողմում անգլիացիներին խանգարում էին շատ եռանդուն՝ կանգնեցնելով գնացքներն ու հափշտակելով հանդերձանքը: Եվ ամենազլխավորը՝ «Ղարաբաղի հայերի և Ադրբեջանի Կառավարության միջև ժամանակավոր համաձայնությունը», որը օգոստոսի 22-ին Շուշիում ստորագրել են VII Ադգային խորհրդի անդամները, ձեռք էր բերվել միմիայն անգլիացիների կոչտ ճնշման շնորհիվ: Նրանք նախ պարտադրեցին Խ.Սուլթանովին, հետո հավաքեցին այրբեջանական զորամասեր, այնուհետև դրան հետևեցին քաղաքական ձերբակալություններ, բռնագրավումներ, սովի ու շրջափակման սպառնալիքներ: Ապա պահանջվեց միլիցիայից՝ հանձնել դիրքերը: Հունիսի 4-7-ին կայսերական օրենքի պահապանների աչքի առաջ տեղի ունեցավ հարձակում Շուշիի և մոտակա գյուղերի վրա, ընդ որում, բրիտանացիք կանգնել էին

---

[22] FO 371/3668, 113402/11067/58/Tel.5339/Encl.1, 2; 118562, 119686/11067/58, US NA, RG 59, 861.0/6583, 867.00/1100; British Documents, vol.1, p.389-390, vol.3, p.478-479, 482-484, vol.4 p.716-717, ՀՀ ՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.110, 119-119 դարձ; գ.32, թ.111-143, 187; ֆ.200, ց.2, գ.49, թ.6-7; գ.122, թ.1-2; ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1033, ց 2, գ.962, թ.33-38, 57, 60, 176; գ.964 հ.II, թ.120-121; գ.964«Ա», թ.37-43, 63-64; Խատիսյան Ա. Նշվ. աշխ., էջ 161-167:

երկու կողմերի միջև, չխանգարելով հարձակվող հրոսակների կուտակմանը, որից հետո բրիտանական կողմը պահանջեց հայերից՝ իրեն հանձնել քաղաքի ամրությունները: Եվ այն ժամանակ, երբ Ղարաբաղի դիմադրական կարողությունը էապես ջլատված էր՝ կայսերական խնամակալները նրան նախ պարտադրեցին այսպես կոչված «Համաձայնությունը» և միայն դրանից հետո թողեցին երկրամասը: Շուշիի կոտորածի մասին Ջ.Մինչի հարցապնդմանը Ջ.Կորին պատասխանել էր, որ ոչ մի հակամիջոց ձեռնարկելու կարիք չկա: Ոչ առանց հիմքերի, նա պնդում էր, որ Հայաստանին հանձնվել է ճիշտ այնքան հող, ինչքան նա ի վիճակի է պահպանել: Իսկ հիմա մնում է չխախտել իրադրությունը՝ սպասելով Հայության կոնֆերանսի որոշմանը:[23]

Որպես հիմնական եզրակացություն, հարկավոր է նշել, որ բրիտանական հրամանատարությունը ստեղծել էր գործուն վարչակարգ, հետապնդելով ոչ թե համադաշնակցային, այլ ազգային-կայսերական շահեր: Նա ելնում էր 1914թ. սահմանազատումից, հսկողությունը փոխանցելով միայն այն ժամանակ, երբ գնալու հրաման էր ստանում: ՀՀ-ից անջատվող Զանգեզուրի ու Ղարաբաղի տարածքներում նա նահանջում էր այնտեղ, որտեղ հանդիպում էր վճռական զինված դիմադրության, և կարողանում էր իր նպատակին հասել այնտեղ, որտեղ իրեն դիմավորում էին հնազանդորեն: Սխալ չէի լինի այդ փորձերը կապել ոչ միայն նավթի, այլ նաև ռազմաստրատեգիական գործոնների հետ, քանի որ Նախիջևանի համար պայքարն ու Սուրմալուի վերաբերյալ կարգադրությունները կրում էին հենց այդպիսի բնույթ:

АНГЛИЙСКАЯ ВОЕННАЯ АДМИНИСТРАЦИЯ В ЗАКАВКАЗЬЕ И ПРАВИТЕЛЬСТВО АРМЕНИИ (ДЕКАБРЬ 1918 – АВГУСТ 1919 ГГ.).

Г.Г.МАХМУРЯН

Резюме

Решением Кабинета от 11 ноября 1918 г. и военного министерства от 11 декабря англичане начали высадку в Закавказье, сохраняя подразделения в Ереване до 28 августа 1919 г. Их приход положил начало созданию в крае целостной военной администрации, с ее границами 4 округов, иерархией и гражданско-дипломати-

[23] *FO 371/3667, 123979/11067/58; FO 371/4158, 118411/521/44; British Documents, vol.1, p.132–136, 389–390; vol.4, p.704–705; "New York Herald," NY, 9.08.1919;* ՀՀ ՊՊԿԱ, *ֆ.199, ց.1, գ.12 մ.II, թ.119–120; ֆ.200, ց.1, գ.35, թ.79–79 դարձ, 187–191; ց.2, գ.37, թ.7–8; գ.49, թ.6–7; գ.58, թ.1–1 դարձ; ֆ.370, ց.1, գ.40, թ.3–4;* ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, *ֆ.4033, ց.2, գ.964, թ.10–11 դարձ, 31–32; գ.964 հ.II, թ.153–156: Տես նաև՝* Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր): *Երևան, 1995, էջ 42–45; FO 371/3659, 121318/512/58.*

ческими функциями. В спорных и стратегически важных пунктах учреждались генерал-губернаторства.

В РА власти надеялись на поддержку и охрану Союзников, хотя передача Республике Карсской области и Нахичевана проходила не без затруднений. Она осуществлялась 19 и 3 апреля 1919 г., по мере вывода британских войск, поскольку Империя не выдерживала бремени необходимых расходов. Главным объектом столкновения стал Нагорный Карабах, где англичане, вопреки прерогативам Парижской мирной конференции, уже 15 января старались ввести азербайджанского губернатора. Из двух отрываемых от Армении регионов – Зангезура и Карабаха, они отступили там, где встретили уверенное военное противостояние.

В целом, британское командование проводило армяно-турецкое размежевание по границе 1914 г., признавая за армянами те земли, где трудней было организовать мирную жизнь.